ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«24» 03 2026թ.
№ ԿԱՄ2/642

«ԼԱԶԵՐԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 00812253/
ՀՀ, ք. Երևան, Շոպրոնի 21
Հեռ.՝ 094-03-77-75

ՀՀ պաշտպանության նախարարության և «Լազերային տեխնիկա» ՓԲԸ-ի միջև 05.03.2013թ. կնքված N ԲԸԱՀԱՇՁԲ-13-8 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Լազերային տեխնիկա» ՓԲԸ-ն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման արդյունքում պայմանագրի թեմայով նախատեսված աշխատանքները չի կատարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5 կետի «բ» ենթակետը՝ (կատարողը բազմիցս խախտել է սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի կատարման ժամկետները) ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.03.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Լազերային տեխնիկա» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի **900005028106** հաշվեհամարին փոխանցել **57 604 375 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), **481 250 ՀՀ դրամ**՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.5 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 25.01.2023թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում ՀՀ պետական բյուջեի **900005570115** հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել **46 250 000 ՀՀ դրամ**՝ ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության նկատմամբ վերոնշյալ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

պայմանագրի շրջանակներում առկա չմարված պարտավորությունը (հաշվապահական հաշվառման մեջ ձևակերպված դեբիտորական պարտքը) և **49 640 000 ՀՀ դրամ**՝ (Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ պայմանագրի առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը): Նշված գումարների վճարված լինելը հավաստող փաստաթղթերի բնօրինակները անհրաժեշտ է մինչև 2026թ. ապրիլի 1-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2077 սենյակ:

Հայտնում եմ, որ վերոնշյալ գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Տեղեկացնում եմ նաև, որ վերոգրյալի համաձայն «Լազերային տեխնիկա» ՓԲԸ-ն կընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ